

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/5

11 հուլիսի 2017թ.

Քննարկվեց Ա/Ձ Կամո Հարությունյանի գանգատը սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրացման շրջանառության կազմում չընդգրկելու վերաբերյալ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Կամո Հարությունյանի կողմից սխալմամբ ՀԴՄ է մուտքագրվել 6.417.420 դրամ, որը նկատել է հերթափոխային հաշվետվությունը դուրս բերելուց հետո: Ընդ որում, համապատասխան ՀԴՄ կտրոնը չի պահպանվել:

Նշվեց նաև, որ ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթներով Ա/Ձ Կամո Հարությունյանի հասցեով ուղարկվել է ծանուցագիր, որով տեղեկացվել է նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին: Սակայն Ա/Ձ Կամո Հարությունյանը նիստին չի ներկայացել, ինչպես նաև չի տեղեկացրել գանգատն առանց իր մասնակցության քննության առնելու մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը, եթե վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար:

Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է Ա/Ձ Կամո Հարությունյանի ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Կամո Հարությունյանի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ